

ՀՌԻՓՍԻՄԵ ՊՈԴՈՍԱՆԿ

ԼՈՒՍՆԻ ՎՐԱ



ՏՁԼ. ԶԶԵ
Պ-79

ՊԵՏՅՐԱՏ — 1936 — ՅԵՐԵՎԱՆ

Լ. Վ. Կարյան
35

«ԼՈՒՍՆԻ ԿԱՅԱՐԱՆԸ»

Ամառ ե... Արևի շողերը ցրում են առավոտյան կաթնագույն մշուշը...

Քաղաքից դուրս, լալն դաշտում, ալնտեղ, ուր կանաչ խոտն իր թավիլն է փռել, բարձրանում է մոխրագույն հսկայական մի շենք: Նոր լեւած արևն իր դեղնավուն շողերն է սփռել այդ շենքի տափակ տանիքի վրա, ուր սկսվել է լուսի և ստվերի աշխույժ պահմոռցիկ...

Տանիքի վրա մի հրաշալի պարտեզ է ձգված: Ալնտեղ, կանաչի մեջ, սպիտակին են տալիս մարմարյա նստարանները: Պարտեզը շրջապատված է վոշ շատ բարձր քարե պատերով: Պատերից մեկի մոտ զանազան տեսակի աստղաբաշխական գործիքներ դեպի լեռկինք են պարզել իրենց գլուխները: Ահա լալն խողովակներ ունեցող մեծ հեռադիտակներ, լեռկինքի տարածությունները չափող պողպատե գործիքներ, ծանրաշափներ, ջերմացուլցներ:

Պարտեզի հենց մեջտեղը դրված է մի տարրերինակ հեռադիտակ, վորը մի քանի խողովակ ունի:

Այս հեռադիտակով կարելի լե տեսնել ամենահեռավոր աստղերը:

Գիշերները, յերբ մութն իջնում է դաշտի վրա, այս հեռադիտակի մոտ հավաքվում են աստղաբաշխներն ու գիտնականները՝ աստղադարդ լեռկինքը դիտելու համար:

Վրճան արտասովոր և գեղեցիկ տեսարան է բացվում նրանց առաջ, վորճան նորանոր փայլուն աշխարհներ են տեսնում նրանք...

Տանիքի վրա ձգված պարտեզն աստղաբաշխական մի հույակապ դիտարան է:

Բայց ահա արևը տանիքից սահեց ներքև, և հիմա վոսկով են ծածկվել մոխրագույն շենքի բետոնե պատերը: Նրա ճակատին զարդարված մի ցուցանակ կա:


Ցուցանակի վրա խոշոր տառերով միայն լեռկու բառ է գրված:

«ԼՈՒՍՆԻ ԿԱՅԱՐԱՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

20793-59



БИБЛИОТЕКА
ГОСУДАРСТВЕННОГО МУЗЕЯ
ДЕТСКОЙ КНИГИ

1965 թիվը ե...

Ոգոստոս ամիսը...

«Լուսնի կայարանին» մոտեցավ մի ընտանիք: Հայրը միջառասակ, թուխ դեմքով մի բանվոր է: Նա աշխատում է հենց «Լուսնի կայարանին» կից գտնվող ռակետները նորոգող արհեստանոցում:

Մայրն աշխույժ դեմքով, կայտառ շարժումներով, լերիտասարդ կին է: Նա փոստատար գնացքի մեքենավար է: Վորդին՝ Լենիկը տաս տարեկան պիոներ է:

Արևի ճաճանչները մեղմորեն շոյում են Լենիկի շագանակագույն խոպոպները, լայն ճակատը, դեմքի ժպիտը և ապա հարաճրճի վոստյուններով թագնվում են նրա կարմիր փողկապի ծալքերում:

Ուրախ է Լենիկը...

Այսօր իրագործվելու է նրա վաղեմի տենչը: Նա, հոր և մոր հետ միասին, պիտի թռչի դեպի լուսինը:

Տասնչորս օր է տևելու այս ճանապարհորդությունը:

Հայրիկն ու մայրիկն ամառային արձակուրդ են վերցրել, իսկ ինքը, Լենիկը, նոր է վերադարձել պիոներական ճամբարից:

Ճամբարային կյանքն իր դրոշմն է դրել Լենիկի վրա: Նրա դեմքը և մարմնի մկանները կարծես բրոնզից լինեն ձուլված: Ձեռքին նա մի փոքրիկ ճամպրուկ ունի... Այստեղ են Լենիկի սիրած զրքերը: Չէ՞ վոր յերկար է տևելու ճանապարհորդությունը: Ռակետային ոդանավի նեղ կայուստում (նավասենյակ) փակված՝ նա ընթերցանություն կփարատի յերկար ճանապարհորդությունից առաջացող ճանձրույթը:

Ընտանիքը մոտեցավ «Լուսնի կայարանին»:

Կայարանի մուտքի աջ կողմից մի սպիտակ տախտակ է կախ տված: Մոտիկից կարելի է կարդալ հետևյալը. «Լուսնի վրա թռչող ռակետային ոդանավերի չվացուցակ»:

Այս ցուցակում մեկ առ մեկ նշված են ոդանավերի համարները, նրանց մեկնելու և վերադառնալու օրն ու ժամը:

Այսօր ժամը 10-ին մեկնում է «Ռակետային ոդանավ № 3-ը»:

Այս ոդանավով է, վոր Լենիկն իր մայրիկի և հայրիկի հետ պետք է թռչի դեպի լուսինը...

Դեռ ժամը ութն է...

Ռակետային ոդանավը կմեկնի յերկու ժամից հետո:

Լենիկը հայրիկի և մայրիկի հետ մտավ կայարանի շենքը:

Մի մեծ դահլիճ, սեղաններ և նստարաններ: Դահլիճի պատերին կախ են տված լուսնի նկարները:

Ահա մի նկար. լուսնի սկավառակին նայելիս՝ կարելի է նկատել — լուսինը լեռնային յերկիր է: Նրա վրա յերևում են ձգվող լեռնաշղթաներ և փոքր ու մեծ բլրադաճաթներ:

Լենիկը գիտե, վոր արևը լուսավորում է այդ սարերը, և նրանց ստվերները տարածվում են լուսնի մակերևույթի վրա: Այդ ստվերների ոգնությունը են գիտնականները հեռադիտակի միջոցով հասնել լուսնի սարերի բարձրությունը: Լուսնի վրա այնպիսի սարեր կան, վորոնց բարձրությունը հասնում է մի քանի կիլոմետրի:

Լուսնի սարերն ողակաձև են, իսկ ողակի մեջտեղն առաջացել է խորը փոս: Շատ հաճախ այս սարերը մեծ տարածություններ են բռնում: Կան սարեր, վորոնց տրամագիծը հարյուր կիլոմետրից անցնում է:

Լենիկը հետաքրքրված է դիտում է այս նկարը: Հայրիկն իր բացատրություններով ոգնում է, վոր նա հասկանա նկարի բովանդակությունը:

Նրանք մոտենում են մի ուրիշ նկարի:

— Տեսնո՞ւմ ես լուսնի վրա գտնվող այն լայն մոխրագույն տարածությունները, — հարցնում է Լենիկին հայրիկը: — Անցյալում գիտնականներն այս տարածություններն անվանում էին «ծովեր»: Այդպես են կոչվում այդ տարածությունները նաև հիմա, թեև մենք արդեն հաստատ գիտենք, վոր դրանք վոչ այլ ինչ են, յեթե վոչ բուսականությունից զուրկ չոր հարթավայրեր: Լուսնի վրա ծովեր և գետեր չկան, վորովհետև այնտեղ ջուր չկա:

— Ջուր չկա, — զարմանքով հարցրեց Լենիկը:

— Այո, ջուր չկա, վորովհետև լուսինը շրջապատված է մթնոլորտով, ինչպես մեր յերկիրը, հետևաբար այնտեղ մթնոլորտային տեղումներ չեն կարող լինել... — պատասխանեց հայրը:

— Հայրիկ, գուցե լուսնի գետնի տակ ջուր լինի, — նկատեց Լենիկը:

— Յեթե մինչև անգամ հողի տակ ջուր լիներ, Լենիկ ջան,

մեկ է՝ ջուրը չե՛ր կարող մնալ լուսնի վրա: Վաղ թե ուշ նա պետք է գոլորշիանար, քանի վոր արեւն աճնտեղ սոսկալի կերպով է այրում: Իսկ գոլորշին չե՛ր կարող մնալ լուսնի վրա, վորովհետեւ լուսինը մթնոլորտ չունի, գոլորշին պետք է ցրվեր անսահման տարածութեան մեջ:

Լենիկը, աչքերը լայն բաց արած, լսում էր հայրիկի բացատրութիւնները: Հանկարծ սրահում հնչեց ուղիւ-բարձրախոսի ձայնը:

— Լսեցե՛ք... լսեցե՛ք... խոսում է ուսկետալին ողանալ համար 5-ը...

— Ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք...

— Մենք լուսնից վերադառնալիս, գետնից 30 կիլոմետր տարածութեան վրա, ծանր աղետ կրեցինք: Պալթեց գազեր պարունակող խցիկը (կաբինո): Մենք անասելի արագութեամբ ընկնում ենք գետնի վրա...

— Ոգնեցե՛ք, Ոգնեցե՛ք:

Ռ Ա Կ Ե Տ Ը Փ Ր Կ Վ Ա Մ Ե

Հայրիկը բռնեց Լենիկի ձեռքը, և նրանք մայրիկի հետ յերեքով շտապ դուրս յեկան սրահից:

Նրանք անցան մի յերկար միջանցքով, և դուրս յեկան «ԼՈՒՍՆԻ կայարանի» բակը:

Հսկայական տարածութիւն էր բռնում այդ բակը: Այստեղ ելին իջնում լուսնից վերադարձող ուսկետները, և այստեղից ելին մեկնում նրանք դեպի լուսինը:

«ԼՈՒՍՆԻ կայարանի» ողանալակայանն է այս: Բակում սկըսվել էր մի անասելի իրարանցում: Լսելով ուղիւ-գուլժը՝ Լուսնի կայարանի բոլոր ծառայողները թափվել ելին բակը: Այստեղ էր և կայաբանապետը, վորը շտապ կարգադրութիւններ էր անում՝ խորտակվող ուսկետալին ողանալը փրկելու համար:

Բակի անկյունում դրած էր մի ումբանետ գործիք: Այդ գործիքն ընդամենը յերկու տարվա պատմութիւն ուներ:

Մի աննկարագրելի հսկայական գործիք էր այդ: Նրա խողովակը Լուսնի կայարանի ամենաբարձր շէնքից էլ բարձր էր: Թվում էր, թե խողովակի ծայրը հասնում է ամպերին:

Լենիկն իր կյանքում այսպիսի բան չէր տեսել...

Այս գործիքն սկսել էր ումբեք նետել ամպերից այն կողմը:



Հսկայական ուժերը մթնոլորտի վերին շերտերում առաջ ելիդ
բերում ուժեղ քամի: Այս հանդիպական քամին պետք է դիմադը-
րություն ցույց տար վայր ընկնող ռակետային ոդանավին, և պետք
է դանդաղեցներ նրա ընկնելու թափը:

Բախում գտնվողները, հայացքներն ուղղած դեպի վեր, սպա-
սում են ոդանավին:

Լենիկի փոքրիկ սիրտը վախկոտ դեղձանիկի պես թպրտում
է կրծքի տակ... Նա ել, մյուսների հետ միասին, անհամբեր սպա-
սում էր ոդանավին:

Հեռու, հեռու, աֆստեղ, ուր յերկնքի կապույտն ավելի մգա-
նում է, յերևաց մի ինչ-վոր սև կետ:

— Ռակետը, Ռակետը, — լսվեց բախում:

Ռմբանետ գործիքը շարունակում էր իր գործը: Նա անընդ-
հատ ուժերը էր նետում դեպի վեր:

Սև կետն սկսեց մեծանալ. նա արագ մոտենում էր գետնին:

Ահա նշմարվում են ոդանավի առանձին մասերը:

Զգացվում է, վոր ոդանավը չի ընկնում, այլ միայն արագ
սահում է դեպի ներքև: Ռմբանետ գործիքն այլևս լռել էր:

Նա պատվով կատարեց իր գործը:

— Ռակետն ազատվեց — շնչաց մայրիկը, վորը կանգնած էր
Լենիկի կողքին: Լենիկի աչքերը փայլում էին ուրախությունից:
Ռակետը փրկված էր...

Ռ Ա Կ Ե Տ Ը

Ժամը 10-ին մոտ էր, յերբ փրկված ռակետը տեղավորեցին
ոդանավակայանում:

Հնչեց առաջին զանգը:

Մի քանի րոպեից հետո պետք է մեկնի դեպի լուսինը ռա-
կետային ոդանավ № 3-ը:

Ռակետն արդեն բախումն է Լենիկը կանգնած է նրա մոտ:
Լենիկի աչքերը կարմրել են. նա ռակետի մասին անվերջ հարցեր
է տալիս հայրիկին ու մայրիկին...

Ռակետը վարունգի ձև ունի. նրա վերևի մասը սրածայր է,
խակ ներքևի մասն՝ ավելի լայն ու տափակ: Ռակետի ներքևի
մասը բաց է, վորպեսզի այրվող գազը չելք ունենա դուրս գալու:

Սրածայր մասում գտնվում է կայուարը:



Այստեղ պետք է նստեն Լենինը, հայրիկը, մայրիկը, հայրիկի ընկերն իր ընտանիքով, ռակետի ողաչուն և նրա ոգնականը:

Կայուտի տակը կա մի պահեստ, վորտեղ գտնվում է ուտելու պաշարը: Այստեղ իրար վրա չեն դարսված արկղներ, փոքր և մեծ տակառներ, պարկեր, պահածոների տուփեր:

Մոտ կես ամիս է տեւում ճանապարհորդութունը, և այդ ամբողջ պաշարը պետք է բավարարի մեր ճամբորդներին:

Ռակետի մնացած տարածութունը, վորը բռնում է ռակետի ամբողջ յերկարության $\frac{2}{3}$ -ը, կազմում է գազերի պահեստը:

Այդ պահեստը լայն խողովակով բաժանվում է յերկու մասի:

Պահեստի մի մասում գտնվում է հեղուկ թթվածինը, իսկ մյուս մասում՝ հեղուկ ջրածինը:

Այս յերկու պահեստն ել վերևի մասում ունեն մի-մի ծորակ: Հենց վոր բաց են անում ծորակը, ծորակից դուրս թափվող հեղուկը փոխվում է գազի: Յեթե յերկու խողովակն ել բաց են անում միաժամանակ, թթվածինը միանում է ջրածնին, և սկսվում է այրումը:

Հետեւանքը լինում է այն, վոր շառաչող գազ է առաջանում: Շառաչող գազը մեջտեղի լայն խողովակով, վորը բաց է ռակետի ներքևի մասում, սկսում է դուրս ժայթքել, և առաջ է բերում մի հսկայական ուժ, վորը դեպի յերկնքի անհուն տարածութունը, դեպի առաջ պետք է մղի ռակետային ողանավը:

Այս ուժն է, վոր մինչև լուսին պետք է հասցնի ռակետը և նրա մեջ նստած Լենինին:

Մ Ե Ք Ե Ն Ա Ն Թ Ռ Չ Ո Ւ Մ Ե

Հնչեց վերջին զանգը...

Ութ հոգի նեղ միջանցքով մասն ռակետի կայուտը:

Լենինը չի բաժանվում իր ճամպրուկից:

Հայրիկի և մայրիկի իրերը վաղուց են տեղավորված կայուտում:

Ողաչուն խնամքով ծածկեց յերկտակ հաստ դռները, դրսից փեղկերով ծածկեց հաստ ապակիներով լուսամուտները: Ռակետը պետք է թռչի անհուն դատարկության մեջ, և յեթե դռներն ամուր չփակեն, կայուտի ամբողջ ողը կցնդի յեթերում:

Դրա համար է, վոր ռակետի կայուտը չունի և վոչ մի անցք:

Ամենափոքր ճեղքվածքից ել կարող է դուրս հոսել ողը:

Թեպետ կայուտը փակված է ամեն կողմից, և դրսի լույսը

ներս չի թափանցում, բայց լուսավորված է ելեկտրական պայծառ լույսով:

Կայուտի պատերը, հատակը և առաստաղը պատած են հաստ, փափուկ կաշվով: Կարծես շուրջը ներքնակ լինի փռած:

Այստեղ գտնվող բոլոր իրերը — սեղանները, աթոռները, փոքրիկ պահարանները — ամուր կպած են հատակին, վոր թռիչքի ժամանակ չշարժվեն իրենց տեղերից: Հենց այդտեղ ել Լենինը ծանոթանում է հայրիկի ընկերոջ հետ, վորն իր կնոջ և իր ութ տարեկան փոքրիկ աղջկա — Լուսիկի հետ մեկնում է դեպի լուսինը:

Լենինն սկսում է Լուսիկի հետ շրջել կայուտում:

Պատերից կախված են տարորինակ գործիքներ:

Ահա մի մեծ ելեկտրական չափագործիք: Այս տախտակից է ստացվում ելեկտրական ուժն ամբողջ կայուտի համար, ելեկտրականությամբ պետք է տաքանա և լուսավորվի այդ սենյակը, ելեկտրական վառարանի վրա պետք է յեփվի Լենինի և Լուսիկի ճաշը: Կայուտում կան նաև ողը մաքրող մեքենաներ:

Այստեղ մի անկյունում շարված են անոթներ, վորոնց մեջ թթվածին կա՝ հեղուկ վիճակում:

Այս հեղուկը շաղ են տալիս կայուտում, յերբ ողի մեջ թըթվածինը պակասում է: Այսպիսով Լենինը ճամբորդության ժամանակ միշտ մաքուր ող կունենա շնչելու համար:

Լուսնի վրա ող չկա, բայց կայուտում ճամբորդների համար բավականին ողի պաշար կա...

Հայրիկը բացատրում է հարցասեր Լենինին և Լուսիկին, վոր լուսնի վրա նրանք պետք է հագնեն անկյունում կախ տված սկաֆանդը կոշված զգեստը:

Այդ ռետինե զգեստից մի քանի հատ կախ է տված անկյունում՝ յերկար, հաստ թելերով փաթաթված, և նման է ջրասույզ լողորդի զգեստին: Մետաղե սաղավարտով ռետինե զգեստը լցնում են ողով, և լուսնի վրա, ուր բոլորովին ող չկա, կարելի յե առանց յերկյուղի դուրս գալ ռակետի կայուտից ու յերկար զբոսանք կատարել:

Լենինը հետաքրքրությամբ դիտում է փայլուն սաղավարտը, վորն ապակեծածկ անցքեր ունի աչքերի համար...

— Զգուշ յեղեք, զգուշ, մեքենան գործի յեմ գցում — հայտարարեց ողաչուն: Ապա նա նորից դառնալով ճամբորդներին՝ ավելացրեց:

— Խորհուրդ եմ տալիս պառկել մահճակալի վրա:

Ճամբորդները կատարեցին նրա կարգադրությունը: Լենիկը պառկել էր մահճակալի վրա, վորը հաստ շղթաներով կախված էր առաստաղից և անհամբեր սպասում էր...

Ողաչուն մոտենում է գործիքներին, վորոնք գտնվում են ելեկտրական տախտակի վրա, և սկսում է շարժել ինչ-վոր լծակ:

Ռակետի ներքևի մասում, մեքենաների բաժնում, ուր գտնվում են թթվածինն ու ջրածինը, անմիջապես սկսվում է այրումը...

— Մեքենան արդեն թռչում է, — հայտարարեց ողաչուն:

ԼԵՆԻՆԸ ԹՈՉՈՒՆ Ե ԴԱՐՁԵԼ

Սոսկալի աղմուկ է լսվում մեքենաների բաժնից, բայց Լենիկը չի վախենում: Նրան այժմ մի ուրիշ բան է զարմացնում, — նա չի կարողանում այլևս շարժել վոչ իր վոտը և վոչ էլ ձեռքը...

Մարմինը ծանրացել է և կպել մահճակալին. վախեցած Լուսինն էլ ուզում է թռչել մահճակալից, բայց ի դուր են նրա ջանքերը: Մահճակալն ամուր բռնել է Լուսինին...

— Մի լերկու ըուպե էլ համբերիր, Լուսինի ջան, և դու կթռչկոտես կայուստում, — ասում է ողաչուն:

— Այս ամենի պատճառն այրման ուժն է, վորն անասելի արագությամբ ռակետը մղում է դեպի վեր: Մեր մարմինն սկսում է դիմադրություն ցույց տալ, և այդ է պատճառը, վոր նա ծանրանում է... Այժմ կայուստի բոլոր իրերը ծանրացել են, — վերջացնում է ողաչուն:

Անցան նորից լերկու, լերեք անախորժ ըուպեներ. շնչելը դժվարացավ, ճամբորդների սրտերն սկսեց սովորականից արագ բաբախել, ինչ-վոր ծանրություն է իջել բոլորի մարմնի վրա...

Բայց ահա ողաչուն նորից ելեկտրական տախտակի վրա շարժեց մի ուրիշ լծակ, և անսպասելի կերպով բոլորը թեթևություն զգացին...

— Այրումը վերջացավ, — ասաց ողաչուն:

— Մինչև հիմա այրման շնորհիվ մեր թռիչքը քանի գնում արագանում էր, իսկ հիմա չկա այդ արագացումը, և մենք թռչում ենք ձիշտ աֆսոս, ինչպես փամփուշտը հրացանի փողից — անփոփոխ արագությամբ:

— Մեր մարմինը և կայուստում գտնվող բոլոր իրերն այլևս չեն դիմանում ներքևից մղող ուժին: Մինչև այժմ ռակետը մղող ուժը ճնշում էր գործ դնում մեր մարմինն ներքևից, իսկ հիմա և՛



հատակը, և՛ կայուտի պատերը միատեսակ արագությամբ են շարժվում, հետևաբար վոչ կայուտը և վոչ ել մեր մարմինն իրար վրա ճնշում գործ չեն դնում: Այդ և պատճառը, վոր մենք կորցրինք մեր քաշը...

Լսելով այս բացատրությունները՝ Լենիկն ուզում և մոտենալ մայրիկին:

Բայց հենց վոր ուզեց վոտները շարժել, նրա ամեն մի քայլը փոխվեց թռիչքի. նա մոտենում և մայրիկին, բայց նրա վոտները համարյա չեն կաշում հատակին, նա թռչում և ողի մեջ...

Լենիկի ուրախությունը չափ ու սահման չկար, և ինչքան հետաքրքիր եր այդ...

Նա փորձեց վոստուն կատարել, և ահա մեր Լենիկը թռավ մինչև առաստաղը, այստեղ կլավ ամբողջ կայուտը պատող փափուկ կաշվին և նորից դանդաղ իջավ հատակին...

— Յես թռչուն եմ դարձել, մայրիկ ջան, — ծիծաղելով ասաց Լենիկը և դիմեց Լուսիկին.

— Լուսիկ, դու ել թռիր ու բռնիր ինձ:

Լ Ե Ն Ի Կ Ը Կ Ա Յ Ո Ւ Տ Ո Ւ Մ

Յերեխաների հնչուն ծիծաղը չի դադարում կայուտում: Լենիկը և Լուսիկը թռչունների պես ճախրում են ողում՝ կաշելով առաստաղին, պատերին:

Ճարպիկ Լենիկը մեկ փախչում և Լուսիկից և կախվում մահճակալից, մեկ թռչում հատակին, մեկ ել վոստուն կատարելով, կանգնում պահարանի գլխին:

Կայուտում ամեն ինչ կորցրել և իր քաշը: Ողաչուի ողնականը հանում և իր ծոցատետրը, մի թերթիկ պոկում միջից և ուզում և մեքենայի մասին իր դիտողությունները գրել:

Մի անգգույշ շարժում... և թուղթը վալը և ընկնում նրա ձեռքից, բայց չի ընկնում հատակին, այլ սկսում և թռչել ողում՝ ինչպես մի ճերմակ թիթեռ... Լենիկն ու Լուսիկն ընկնում են թղթի հետևից: Անհնազանդ թիթեռը փախչում և նրանցից, վեր ու վար թռչում, թագնվում անկյունում, հետո նորից հասնում առաստաղին:

Լուսիկը մի ճարպիկ վոստուն և գործում, և ահա թուղթը նրա ձեռքումն է: Հաղթական ժպիտը դեմքին՝ նա հանձնում և թուղթը ողաչուի ողնականին:



Յերկու կանայք, Լենիկի և Լուսիկի մայրիկները, ելեկտրա կան վառարանի վրա սկսում են ճաշի պատրաստութուն տեսնել: Կայուտի հատակում մի անցք կա, շարժական դռնով, վորը փակված է: Այդ դուռը բացվում է դեպի ներքև, ուր գտնվում է մըթերքների պահեստը:

Լենիկի մայրը բաց է անում այդ դուռը և իջնում է ներքև: Լենիկն ու Լուսիկը հետևում են մորը:

Ինչքան շատ բաներ կան պահեստում...

Լուսիկը քաղցրեղեն շատ է սիրում, իսկ անկյունում կարծես հենց նրա համար են պատրաստել մի թղթե պարկ՝ լցած զանազան անուշեղեններով: Պարկերը և արկղները լի լեն ամեն տեսակ մթերքներով, բաց ալս բոլորի մեջ ալյուր և ձավար չկա... Ուշադիր Լենիկն իսկույն նկատեց այդ և հարցրեց մայրիկին, թե ինչո՞ւ չենք հետներս ալյուր և ձավար վերցրել:

Քո դիտողությունը ճիշտ է, Լենիկ ջան, — ասաց մայրիկը, — պահեստում մենք ալյուր և ձավար չունենք, և չենք վերցրել վորոշ նպատակով: Յեթե մենք մեր ողանավում ալյուրի կամ ձավարի պարկերի բերանը բաց անելինք, իսկույն կտարածվելին ողի մեջ: Անհնարին կլինեն ողում տարածված ալյուրն ու ձավարը հավաքել, և մենք ստիպված կլինելինք շնչել ալյուրի փոշին: Հետո այդ փոշին կթափանցեր մեր շնչափողը, առաջ կբերեր շատ անախորժ հազ, և մենք կխեղդվելինք: Այդ է պատճառը, վոր մեզ հետ ալյուր և ձավար չենք վերցրել:

Պահեստից անհրաժեշտ պաշարը վերցնելով՝ մայրիկը Լենիկի և Լուսիկի հետ վերադարձավ կայուտը:

Լենիկի աչքերն ուրախութունից փայլում ելին:

Ընդամենը չերկու ժամ է, վոր ռակետը թողել է գետինը, բաց վորքան տարորինակ բաներ տեսավ Լենիկը...

Ելեկտրական լույսով վողողված կայուտը հրաշալիքներով լի մի սքանչելի աշխարհ էր...

Ո Դ Ա Չ Ո Ւ Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Մ Ե

Ճաշից հետո բոլորը թիկն տված հանգստանում ելին՝ լալն, անշարժ բազկաթոռներում նստած, և լսում ողաչուին:

Ողաչուն մի շատ հետաքրքիր բան էր պատմում.

— Սրանից չերեսուն տարի առաջ մարդիկ չգիտեին, վոր կարելի չէ դեպի լուսին ճանապարհորդել... Այն ժամանակ նոր ելին



20793-59

սկսել փորձել ռակետի հատկությունները, և փորձերը կատարում էին փոքր ռակետներով, վորոնց արագությունը թույլ եր տալիս անցնել աննշան տարածություններ:

Յես դեռ չերելսա ելի, յերը լսեցի մեծերից այդ փորձերի մասին:

Յերկար տարիների ընթացքում գիտնականներն աշխատում էին գտնել այնպիսի մի մեքենա, վորը ճեղքելով յերթերի անսահման տարածությունը՝ կարողանար հասնել լուսնին...

Այդ տեսակետից հետաքրքիր են ուս գիտնականներ՝ հեղափոխական Կիբալչիչի և Նրանից հետո հայտնի գիտնական Յիուկովսկու փորձերը:

Մեր ռակետը Յիուկովսկու գյուտն է... Իհարկե, տարիների ընթացքում դեպի լուսնին մի շարք թռիչքներ կատարելուց հետո, ռակետի տեսքը և նրա ներքին կառուցվածքը բավականին կատարելագործվեցին: Մեր ռակետն ավելի չե կատարելագործված քան թե Յիուկովսկու ռակետը:

Հետաքրքիր եր առաջին թռիչքը, վորը վերջացավ ռակետի խորտակումով...

Ռակետը չհասավ լուսնին: Նրա մեջ նստած յերեք ճամբորդներն ել մահացան:

Լուս յերթերը միայն գիտե այդ սոսկալի աղետի մասին...

Մեր յերկրի վրա ընկավ ռակետի կայունում գտնվող՝ ջարդ ու փշուր յեղած ելեկտրական տախտակը միայն: Մի տարուց հետո կատարվեց յերկրորդ թռիչքը:

Այս թռիչքն ավելի հաջող եր քան առաջինը. ճամբորդները հասան լուսնին, այնտեղից ուղարկեցին լուսն-հեռագիր, վորն ընդունեց մեր աստղաբաշխական կայանը: Բայց յերկրորդ ռակետը նույնպես չվերադարձավ և նրա անհետացման գաղտնիքն այնպես ել մնաց ու մնաց անհայտ:

Այս յերկու դեպքերից հետո գիտնականներն որ ու գիշեր զբաղված էին ռակետը կատարելագործելով... և ահա որերից մի որ կատարվեց յերրորդ հաղթական թռիչքը:

Ռակետը հասավ լուսնին և վերադարձավ անփնաս...

Մենք նվաճեցինք յերթերը, իսկ հիմա, յերը այս առաջին հաջող թռիչքից հետո արդեն անյել ե տասը տարի, լուսնի վրա ճամբորդելը դարձել ե հետաքրքիր զբոսանք:

Մինչև անգամ աղետի դեպքում մենք նախատեսած ունենք փրկության բոլոր միջոցները:

Հենց դուք ինքներդ տեսաք ինչպես մենք փրկեցինք № 3 ռակետային ոդանավը:



Մ Ի Ա Ռ Ա Վ Ո Տ

Մի առավոտ, յերբ ճամբորդները զարթնել էլին իրենց շարժական ննջարանում, ողաչուն, քաշելով ինչ վոր պարան, բացեց ննջարանի պատուհանների արտաքին փեղկերը:

Ռակետը վաղուց եր դուրս թռել յերկրի մթնոլորտի սահմաններից, և պատուհանների ապակիները հիմա ռակետի արագ թռիչքից՝ արդեն ազատ էլին յեթերում այլվելու վտանգից:

Լենիկն արագությամբ մոտեցավ պատուհանին և ինչպես զարմացավ...

Հայրիկի ժամացույցը ցույց եր տալիս ժամի 8-ը: Արդեն առավոտ եր, բայց յերկինքը սև եր ափսոս, ինչպես գիշերը: Պայծառ արևը փայլում եր, յերկնակամարում անթիվ աստղերը կայծկլտում էլին, բայց ափսոսանքով յերկինքը մթին եր:

Լենիկը զարմացած դիտում եր այդ տարրերնակ տեսարանը: Հայրիկը շտապում եր բավարարել նրա հարցասիրությունը:

— Յերկրից դիտելիս յերկինքը կապույտ ե յերևում, վորովհետև յերկիրը շրջապատված ե ոդով: Անող տարածությունից նախելիս, յերկինքը սև ե լինում և այդ սև յերկնքի վրա կարելի չե աստղեր անսնել: Յերկրի վրա, ցերեկվա պայծառ լույսի ժամանակ, աղոտանում ե աստղերի թույլ փայլը, և մենք ցերեկով աստղեր չենք տեսնում:

Լենիկը և Լուսիկը հիացած դիտում էլին այդ տեսարանը, իսկ ռակետը սրընթաց ճեղքելով յեթերի անսահման սարածությունը, ընթանում եր դեպի առաջ, դեպի լուսինը...

Ձ Բ Ո Ս Ա Ն Ք Յ Ե Յ Ե Ր Ո Ի Մ

Չորս որ ե շարունակվում ե այս ճամբորդությունը: Որերն ու ժամերն անցնում են միապաղաղ, իրար նման: Նեղ կայուտ, սլացող ռակետ և սև աստղազարդ յերկինք:

Աշխուժ և հարցասեր Լենիկն սկսում ե արդեն ձանձրանալ: Նա կարդում ե, հաճախ ել խաղում Լուսիկի հետ...

Բայց նա անհամբեր ե, նա ուզում ե շուտ հասնել լուսնին:

Ողաչուն նկատում ե Լենիկի ձանձրույթը և առաջարկում ե անհամբեր փոքրիկին մի զբոսանք կատարել յեթերում:

Լենիկն ուրախությունից թռչկոտում ե:

Հինգ րոպե հետո հայրիկը, ողաչուն, Լենիկը և Լուսիկը, հագ-

նելով սկաֆանդները, ջրասույզ լողորդի այդ զգեստը, բաց արին կայուտի յերկտակ դուռը և դուրս յեկան անսահման յեթերը՝ զբոսանքի:

Դուրս գալիս նրանք իրենց հետևից արագ փակեցին կայուտի դուռը, վորպեսզի ողը չցնդի յեթերում:

Յեվ ահա Լենիկը ճախրում ե յեթերում, և միայն մի բարակ յերկաթալար ե միացնում նրան ռակետի հետ...

Չնայած յեթերում սոսկալի սառնամանիք ե, սակայն Լենիկը չի մըսում: Նրան տաքացնում են արևի վառ շողերը և, վոր գլխավորն ե, սկաֆանդրի մեջ հարմարեցրած ելեկտրական փոքրիկ գործիքը, վորը կայուտի ելեկտրական տախտակից ստացած ջերմությամբ տաքացնում ե Լենիկին:

Լենիկն ազատ շնչում ե այն ողը, վորը փսնվում ե իր մեջքից կախ տված փոքրիկ պալուսակի մեջ:

Բացի արևից, յերկնքի խավար տարածության վրա նա տեսնում ե մի ինչ վոր նոր լուսատու, վորն ավելի խոշոր ե յերևում քան արևը: Այդ հենց մեր յերկիրն ե, վորտեղից չորս որ ե՝ ինչ հեռացել ե Լենիկը: Նոր լուսատուն այդքան խոշոր ե յերևում, վորմհետև ավելի մոտ ե ռակետին, քան թե հեռավոր ճաճանչազարդ արևը:

Խավարում, ուրիշ տեղ, ուր ցրված ե աստղերի փոշին, փայլում ե լուսինը:

Նա ավելի մեծ ե, քան Լենիկին կթվար յերկրից դիտելիս:

Յեվ այդ հասկանալի չե, չե՞ վոր Լենիկն աննկարագրելի արագությամբ մոտենում ե նրան:

Ճամբորդները հիացմունքով էլին դիտում այս բոլոր հրաշալիքները:

Յեվ ինչքան նոր բաներ կատարի Լենիկը պիտներ բազայում, յերբ վերադառնա լուսնից:

Կես ժամ մնալով յեթերում՝ ճամբորդները, գոհ այդ անսովոր զբոսանքից, վերադարձան կայուտը:

Լ Ո Ւ Ս Ն Ի Վ Ր Ա

Անցավ ելի յերեք որ: Ռակետը շարունակում եր իր թռիչքը:

Ռակետի պատուհանից դիտելիս՝ կարելի չե նկատել, վոր լուսինը քանի գնում մեծանում ե: Այդ նշանակում ե, վոր ճամբորդները մոտենում են լուսնին:

Արդեն առանց հեռադիտակի կարելի չե նշմարել լուսնի վրա

այն բոլոր մանրամասնութիւնները, վոր մեր յերկրից կարելի չէ տեսնել միայն հեռագիտակի ոգնութեամբ:

Ահա նրա «ծովերը», հրաբուխները, մեծ ու փոքր սարերը:

— Յերկիրը, յերկիրը, — ուրախացած բացականչում է Լուսիկը:

— Այդ յերկիրը չէ, Լուսիկ ջան, — ասաց նրան մայրիկը, — լուսինն է. մենք մոտենում ենք մեր ճամբորդութեան վերջնական նպատակին:

Ճամբորդներն զգում են, վոր մի տարրինակ բան է կատարվում, և իրենց հետ շարժվող ռակետն ընկնում է ինչ-վոր անհուն տարածութեան մեջ:

Ռակետը վաղուց արդեն չէր յենթարկվում յերկրագնդի ձգողական ուժին:

Զարմանալի արագութեամբ նա կտրում անցնում էր յեթերի հակադական տարածութիւնը: Մոտենալով լուսնին՝ ռակետն սկսում է յենթարկվել նրա ձգողական ուժին:

Ռակետի ընթացքը դնալով ավելի չէ արագանում: Վայրեջքը տևում է մոտ յերեսուն ժամ: Լուսնի տեսքը բոլորովին փոխվել է. նա յերկնքի ֆոնի վրա բավականին մեծ տարածութիւն է բռնում: Լենիկը չի հեռանում պատուհանից:

Աչքերը լայն բացած՝ նա նայում է լուսնին, բավականին պարզ ու վորոշ տեսնելով լուսնի ողակաձև սարերն ու մոխրագույն տափաստանները:

Ողաչուն ելեկտրական տախտակից չհեռանալով՝ գործի չէ անցնում: Պետք է նախազգուշանալ, վորովհետև յեթե դեպի լուսինը տեղի ունեցող վայրեջքը շարունակվի նույն արագութեամբ, ռակետը շարժ ու փշուր կլինի:

Բայց մեր ողաչուն փորձված է:

Նա ռակետը վտանգի չի յենթարկի:

Մի հմուտ շարժում, և ահա նա շրջում է ելեկտրական տախտակի լծակը, ու նորից ռակետի ներքևի մասում, գազերի պահեստում, սկսվում է այրումը:

Ռակետը փոխում է իր ընթացքը: Նա շուռ է գալիս դեպի լուսինն իր այն մասով, վորտեղից դուրս է ժայթքում շառաչող գազը:

Ռակետի շարժումը միանգամից դանդաղեց:

Դուրս ժայթքող գազը ներքևից դիմադրում էր ռակետի ընկնելուն, և ռակետը յենթարկվելով լուսնի ձգողական ուժին, դանդաղ սահելով յեթերի մեջ, մոտենում էր լուսնին:

Ճամբորդները չեն հեռանում պատուհաններից:



Քիչ առաջ հեռավոր թվացող լուսինն արդեն մոտիկ էր — ընդամենը մի քանի կիլոմետր տարածություն է մնում: Առանց մի վորևե ցնցումի, դանդաղ, ռակետն իջնում է լուսնի վրա:

— Հասանք, հասանք, — ցնծությամբ բացականչեցին Լենինը ու Լուսինը:

Լ ՈՒՍ Ե Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

Ողաջուն մոտենում է երկարական տախտակի մոտ գտնվող պատուհանին: Պատուհանի մոտ, պատվանդանի վրա, ապակե մի մեծ երկտրական լապտեր է ամրացված: Նա շուտ է տալիս լապտերի կոճակը, կաշուտը վողողվում է կանաչ ու պաշտառ լույսով:

Ռակետից դուրս, լուսնի մակերևույթը բավականին մեծ տարածության վրա լուսավորվում է կանաչ լույսով:

— «Լուսնի կայարանին» չես լուսե-հեռագիր ուղարկեցի, — ասում է ողաջուն:— Այս րոպեյիս «Լուսնի կայարանի» տանիքի վրա, այնտեղ, ուր գտնվում է աստղաբաշխական դիտարանը, գիտնականները նախելով լուսնին ամենամեծ հեռագրիտակով՝ տեսնում են այս կանաչ լույսը: Նրանք կարգում են մեր հեռագիրը:

— «Անվտանգ հասանք և իջանք լուսնի վրա»:

Ռադիո հեռագիրն այստեղից չե՞ր հասնի մեր լերկրին, ուստի մենք դիմում ենք մի ուրիշ միջոցի՝ լուսե-հեռագրին: Տարբեր դույնների լապտերներ վառելով՝ մենք կարող ենք լուսնի վրայից խոսել լերկրի հետ:

Լենինը մոտեցել էր ռակետի լերկտակ դռան, և ուզում էր դուրս գալ ռակետից:

— Մի շտապիր, Լենին, առանց սկաֆանդրի չես կարող դուրս գալ, — զգուշացնում է ողաջուն անհամբեր փոքրիկին:

Ճամբորդները հագնում են սկաֆանդրները և ռակետից դուրս են գալիս՝ լուսնի վրա զբոսնելու:

Յ Ե Ր Կ Ր ՈՐ Դ Զ Բ ՈՍ Ա Ն Ք

Մի անհայտ աշխարհ է բացվում ճամբորդների առաջ: Յոթ որ շարունակ նրանք ռակետի մեջ՝ իրենց վոտների տակ չեփն զգում համարյա վոչ մի հենարան:

Բայց այժմ ահա նրանք ամուր կանգնած են հողի վրա:

Նրանք կարող են ման գալ այստեղ ճիշտ այնպես, ինչպես լերկրի վրա:



Բայց մի նոր անակնկալ ե սպասում էին իրենք:

Լուսնի վրա ձգողական ուժը վեց անգամ պակաս է քան մեզ մոտ՝ յերկրի վրա: Դրա համար ել լուսնի վրա առարկաները վեց անգամ ավելի թեթև են:

Կորցնելով իր կշռի հինգ վեցերորդը՝ Լենիկը շատ հեշտ և թեթև է շարժվում լուսնի վրա:

Յեվ վորովհետև լուսինը մթնոլորտով չի շրջապատված, և նրա շարժումները ղեմադրության չեն հանդիպում, դրա համար ել Լենիկն առանց մի վորևե գծվարության վոստոստում է զարմանալի թեթև ու արագ:

Ճամբորդներն ուրախ շրջում են լուսնի լայնարձակ դաշտերով, ծանոթանում և հիանում Յերկրի արբանյակի այսքան տարօրինակ բնությամբ:

Ջրոսանքը շատ զվարճալի լի. հայրիկը, մայրիկը, Լուսիկն ու իր ծնողներն ախպես են քայլում՝ ասես թռչելիս լինեն:

Լենիկը ծիծաղում է նրանց թռիչքների վրա:

Մի անգգուշ շարժում, և ճամբորդները վայր են ընկնում, թավալվում գետնին, իհարկե առանց վորևե ցավ զգալու, հետո նորից վեր են թռչում և սկսում առաջ շարժվել փոսերի ու բլուրների վրայով:

Հայրիկի ընկերը լուսանկարում է լուսնի զանազան տեսարանները:

Այնտեղ, յերկրի բնակիչներին շատ պիտի հետաքրքեն այս լուսանկարները: Լենիկին զարմացնում է մի հանգամանք. լուսնի հողը սև գույն ունի, մինչդեռ նրան թվում էր, վոր լուսնի հողը պետք է բաց մոխրագույն լիներ:

Հայրիկը բացատրում է, վոր լուսնի հողը նման է մեր սևահողին:

— Նա մեզ թվում է բաց գույնի, — ասում է նա, — վորովհետև լուսավորված է արևի շողերով և արտացոլում է արևի լույսը:

Ճամբորդները վորոշում են բարձրանալ մոտակա սարի գագաթը: Այդտեղից բացվում է մի սքանչելի տեսարան:

Լենիկը Լուսիկի հետ առաջ է վազում, իսկ մյուսները հետևում են նրանց:

Ինչ հեշտ ու թեթև է բարձրանալը...

Սարի լանջը շատ աննշան թեքություն ունի, և բարձրանալիս յերբեք չեյին զգում, թե սար են բարձրանում:

Ճամբորդները հասան սարի գագաթը:

Յերկինքն այդտեղից սև է՝ ինչպես անթափանց թավիշը. այդ

թավշի ծալքերում թաքնված՝ փայլում են հեռավոր աստղերը, իսկ այնտեղ, յերկնքի խորքում, ճամբորդներից չորս հարյուր հազար կիլոմետր տարածության վրա, փայլում է հեռավոր Յերկիրը:

Լուսավորված արևի վառ ճաճանչներով՝ Յերկիրն էլ է նման մի փոքրիկ արևի...

Այս աննման տեսարանով հիացած՝ մեր ճամբորդներն իջնում են սարից: Լենիկը և Լուսիկը նորից վազում են առաջից, և աշխատում են իրարից առաջ անցնել:

Մեկ էլ Լենիկն ու Լուսիկը լիտ նայեցին և այլևս մյուս ճամբորդներին չտեսան:

Յերկուսն էլ անհանգիստ փորձեցին լիտ վազել, բայց ապարդյուն...

Նրանք կորցրել էին իրենց ծնողներին:

Լենիկը և Լուսիկն առաջ ընկնելով՝ գնացել էին բոլորովին ուրիշ ճանապարհով, իսկ ծնողներն իջել էին նույն ճանապարհով, վորով բարձրացել էին սարի գագաթը:

Նրանք չեյին նկատել, թե ինչպես յերեսաները շեղվել էին ճանապարհից:

Լենիկը և Լուսիկը մոլորված՝ տխուր նստեցին մի փոքրիկ բլրակի վրա:

ԾՆՈՂՆԵՐԸ ԳՏՆՈՒՄ ԵՆ ՄՈԼՈՐՎԱԾ ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Լենիկը տխուր է, բայց չի արտահայտվում: Մայրիկը և հայրիկը կփնտռեն փոքրիկ չարաձծիներին...

Լուսիկը կծկվել է քարի վրա և լալիս է:

Նրանք չեն կարող գոռալ, ոգնություն կանչել. նրանց կաշկանդում է սկաֆանդրի մետաղե սաղավարտը, իսկ հանել սաղավարտը — ո՛, այդ անհնարին է, չի կարելի... Ձե՛ վոր առանց սկաֆանդրի մի վայրկյանում նրանք կխեղդվեն առանց ողի:

Լենիկի փոքրիկ գլխում հանկարծ մի միտք է ծագում, — ողի պաշարն սկաֆանդրում կարող է հատնել, և այն ժամանակ... Ձե՛, պետք է շուտով վերադառնալ ռակետը, վորտեղ կան թթվածնով լի անոթներ:

Արևը սաստիկ այրում է: Այստեղ ցերեկը տևում է մի քանի օր. գիշերը նույնպես հավասար է մեր յերկրագնդի մի քանի օրվան: Արևը սոսկալի տաքացրել է լուսնի հողը: Լենիկն ու Լուսիկն այլևս չեն կարողանում ղեմանալ, և շտապում են թաքնվել մոտակա բլրակի ստվերում:

Այստեղ համեմատաբար հով է:

Լենինը չի ուզում շարժվել տեղից. նա վախենում է, վոր շատ հեռանա ծնողներից, և այն ժամանակ բոլորովին կկորչի այս դաժան բնության անհյուրընկալ ծոցում:

Մեկ ել՝ նա նշմարեց հեռվում, այնտեղ՝ լուսնի դաշտի վրա, ինչ-վոր շարժվող ստվերներ: Ստվերներն սկսեցին մոտենալ մեր տխուր և փոքրիկ ճամբորդներին:

Լենինը բռնեց Լուսիկի ձեռքը, և յերկուսով շտապեցին ընդառաջել լեկվորներին... Մի քանի րոպե հետո Լուսիկն ուրախ փարվեց իր մոր վզով:

Լենինը մեղավորի պես կանգնել էր ծնողների կողքին. նրա սիրտն արագ բաբախում էր, շունչը կտրվում, բայց նա ձայն չէր հանում:

Սկաֆանդրում սկսել էր պակասել թթվածնի պաշարը:

— Դե շուտ, դեպի ռակետը, այնտեղ գլուխդ չի պտտվի և փոքրիկ սիրտդ այդպես արագ չի բաբախի:

Ն Ո Ր Ի Յ Ռ Ա Կ Ե Տ Ո Ւ Մ

Ռակետի յերկտակ դռները բացվեցին նորից, և հյուրընկալ ռակետն ընդունեց իր մեջ ճամբորդներին:

Լենինն այստեղ ազատ է շնչում. ողաչուն թարմացրեց ողը՝ հեղուկացած թթվածին սրսկելով կայուտի մեջ. Յերկար զբոսանքից հոգնած՝ մեր հերոսները տեղավորվեցին մահճակալների վրա:

Ողաչուն մոտեցավ երկտրական տախտակին և նորից շարժեց լծակը:

Ռակետի խցիկից լսվեց ծանոթ աղմուկը, և գազն սկսեց այրվել:

Ռակետը պոկվում է լուսնից և նորից լողում լեթերի անսահման տարածության մեջ:

Ճամբորդները հեռանում են լուսնից:

Սնցնում է յերկու որ:

Մի առավոտ Լենինը զարթնում է տարրինակ ձայներից, վորոնք լսվում են ռակետից դուրս, լեթերում: Նա վազում է պատուհանի մոտ:

Այս ինչ աստղեր են շարժվում յերկնքի վրա: Նրանք արագ սահում են սև տարածության մեջ՝ թողնելով իրենց հետևից մի լուսավոր հետք:

Կարծես թե աստղերի անձրև լինի...

Վայր ընկնող աստղերի տարափն է այդ...

Հայրիկը բացատրում է, վոր այս յերևույթն ավելի նկատելի լի լինում ոգոստոս ամսին:

Վայր ընկնող աստղերը, ասուպները, ջարդ ու փշուր չեղած յուսատուների մասնիկներն են:



Պատահում է, վոր յերկու լուսատու, յեթերի հսկայական առաժույթյան մեջ իրար են հանդիպում, բախվում են իրար, փշրվում մաս-մաս լինում: Ահա այդ մասնիկներն են, վոր դառնում են այսպես կոչված վայր ընկնող աստղեր, մետեորներ կամ աստղային:

Ողաջուն մտազբաղ է. նա վախենում է, վոր այդ մետեորներից մեկն ու մեկը կարող է կաշել արագ սլացող ռակետին:

Նա շարժում է ելեկտրական տախտակի լծակը և փոխում է ռակետի ուղղությունը...

Շուտով ռակետը դուրս է գալիս աստղային շրջանից և նորից շարունակում իր ճանապարհը:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Լենինն արդեն սովորել է շրջապատին: Նա այժմ ավելի հեշտույթյամբ է շարժվում կայուստում:

Նրան այլևս չի սարսափեցնում այն սև անդունդը, վորի մեջ շարունակում է սլանալ ռակետը: Ելի մի չորս որ, և ռակետը մոտենում է Յերկրին:

Արդեն նկատելի են վերասլաց սարերը, կապույտ գետերը և փոթորկվող ծովերը...

Շուտով, շուտով նրանք կլինեն քաղաքում, իրենց տանը, կտեսնեն մերձավորներին, ընկերներին և նրանց կպատմեն տեսած հրաշալիքների մասին:

Լենինն ուրախացած ծափահարում է, թռչկոտում անդգույշ շարժումներ գործում մոռանալով, վոր ինքը դեռ ռակետի մեջ է գտնվում:

Նա նորից կաշում է ռակետի առաստաղին և թեթև վոստյուններով թռչում ներքև...

Ռակետը մտել է Յերկրի մթնոլորտի սահմանները:

Արդեն յերևում է «Լուսնի կայարանի» կանաչադարձ տանիքը: «Լուսնի կայարանը» պատրաստ է ընդունելու մեր ճամբարայիններին:

Ռակետի մեջ սկսվել է գազի այրումը:

Ռակետն զգույշ սահում է ներքև...

Մի քանի րոպե հետո «Լուսնի կայարանի» բակն է մտնում № 3 ռակետը:

Յերեկո յեր, ամառվա մի յերեկո...

Լենինը նորից Յերկրի վրա յեր...

Իսկ այնտեղ, վերևում, յեթերի անսահման տարածության մեջ, շարունակում է փալել արծաթագույն լուսինը:

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հոփսիմե Պողոսյանի «Լուսնի վրա» խորագրով ֆանտաստիկ պատմվածքը 1934 թվին Թիֆլիսում «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրի կազմակերպած մրցանակաբաշխության ժյուրիի կողմից արժանացել է յերրորդ մրցանակին:

Պատմվածքում խոսվում է այն մասին, թե ինչպես 1965 թվին պիոներ Լենինն ու հոկտեմբերիկ Լուսինն իրենց ծնողների հետ միասին ռակետով թռչում են դեպի լուսինը: Թռիչքի ընթացքում և լուսնի վրա Լենինն ու Լուսինը շատ հետաքրքիր արկածների յեն հանդիպում: Այդ բոլորի մասին դուք կիմանաք, յերբ կարդաք ամբողջ պատմվածքը, վորն առանձին գրքով տպագրվում է առաջին անգամ:

Յերեխաներ, դիրքը կարդալուց հետո ձեր տպավորությունների մասին գրեցեք Պետրատ, Մանկական Գրականություն բաժնին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. «Լուսնի կայարանը»	2
2. Լենինը պատրաստվում է լուսնի վրա թռչելու	4
3. Լենինը «Լուսնի կայարանում»	5
4. Ռակետը փրկված է	6
5. Ռակետը	8
6. Մեքենան թռչում է	10
7. Լենինը թռչուն է դարձել	12
8. Լենինը կայուստում	14
9. Ողաջուն պատմում է	16
10. Մի առավոտ	20
11. Զրոսանք յեթերում	20
12. Լուսնի վրա	21
13. Լուսնի հեռագիր	24
14. Յերկրորդ զրոսանք	24
15. Ծնողները գտնում են մոլորված յերեխաներին	27
6. Նորից ռակետում	28
17. Վերադարձ	30

Խմբագրեց՝ Հ. Պետրոսյան, Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանճյան, Սրբագրեց՝ Հ. Մանուկյան

Դիպլիտի լիազոր 266, պատմ. հիմնական հրատարակչություն, 1995, Գեորգիա

Պետրատի տպարան, Յերևան, Մ. Գևորգյանի 4



ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.



ՐԻՍԻՄԵ ՍՈՍԻՅԱԼԻՍՏԻԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գրք. ՍՍՐԱ, 1986, Երևան.